ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆԻՑ

ԻՍՐԱՅԷԼԻ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱՁԱՅՆԱԾ Է ՀՐԱԺԱՐԻԼ ՊԱՐՈՆ ՏԷՐ ԿԱԼՈՒԱԾԸ ԲՌՆԱԳՐԱՒԵԼՈՒ ՄՏԱԴՐՈՒԹԵՆԷՆ

Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի և Իսրայէլի Պաշտպանութեան նախարարութեան միջև տեղի ունեցած երկար բանակցութիւններէ յետոյ, Իսրայէլի Պաշտպանութեան նախարարութիւնը համաձայնած է հրաժարիլ Պարոն Տէրի Կալուածը բռնագրաւելու իր մտադրութենէն, Երուսաղէմի և Բեթղեհէմի միջև ապահովութեան պատ մը շինելու նպատակին համար:

Պարոն Տէրի կալուածը ունի մօտ 143 դունում (36 acres) հնագիտական հողատարածք, որու մէջ կան 1600 ձիթենիի ծառեր և ստորերկրեայ հին աղօթարաններ և գերեզմաններ: Պարոն Տէրի կալուածը դարեր շարունակ Հայոց Պատրիարքարանին համար եղած է բարեպաշտական և ճգնողական բնոյթի կեդրոն մը:

Մայիս 2002-ին, Իսրայէլի պետութիւնը յայտարարեց, թէ կը ծրագրէ կառուցել ապահովութեան պատ մը Երուսաղէմի և Այտա գաղթակայանի միջև, որ կը գտնուի Բեթղեհէմ քաղաքի հիւսիսը, ապահովութեան համար զանազան արգելքներէ բաղկացող պատ մը որ պիտի բաժնէ Պարոն Տէրի կալուածը երկուքի, վերածելով այն անպէտ հողամասերու:

Երկար բանակցութիւններէ ետք, Իսրայէլի պետութիւնը համաձայնեցաւ տեղափոխել ապահովութեան պատի ուղղութիւնը, և Պարոն Տէրի կալուածը ետ տրուեցաւ Հայոց Պատրիարքարանին, բացի նեղ հողաշերտէ մը որ պիտի անցնի Պարոն Տէրի կալուածին հարաւային պարսպի եզերքէն, ապահովութեան և պաշտպանութեան նպատակներու ժամանակաւոր գործածութեան համար:

Իսրայէլի պետութիւնը ճանչցած է Հայ Պատրիարքարանի բացարձակ իրաւունքը Պարոն Տէրի կալուածէն ներս ունենալու ազատ մուտք: Պատրիարքարանը իրաւասու է բնակութիւն հաստատել, հողը մշակել, ձիթենիի ծառերը յօտել, ուխտագնացութիւն և կրօնական արարողութիւններ կազմակերպել առանց արգելքի:

Իսրայէլի պետութիւնը նաև համաձայնած է Հայ Պատրիարքարանը հատուցել կատարուած բոլոր վնասներուն համար:

Պատրիարքարանս իր գնահատանքը և շնորհակալութիւնը կը յայտնէ, ի մասնաւորի Հայրենի պետութեան Արտաքին գործոց նախարարութեան, Նուիրապետական Աթոռներու գահակալներուն, թեմական առաջնորդներուն, և հայ և ոչ-հայ կազմակերպութեանց, ինչպէս նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի թելադրանքով իրենց ներդրումը բերած Հռոմի Սրբազան Քահանայապետ Յովհաննէս-Պօղոս Բ. Պապին, Ընդհանուր Ռուսիոյ Ալեքսի Բ. Սրբազան Պատրիարքին և կրօնապետներուն՝ Պարոն Տէրի հարցին հետ կապուած օժանդակութեան համար:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ
ԿԱԼՈՒԱԾՈՑ ԳՐԱՍԵՆԵԱԿ

26 նոյեմբերի 2002 թ.